ԼՈՒՐԵՐ

Խմբագրութիւնս Ամեն. Հայոց վեհ. Կաթողիկոսից նուէր ստացաւ 2 օրինակ էջմիածնատիպ օրացոյց։

Լրագիրները հաղորդում են, որ վեհ. կաթողիկոսը կոնդակով հրամայել է, որ այսուհետև հայ հոգևոր հաստատութիւնների մէջ բոլոր գրագրութիւնները լինին աշխարհաբար լեզուով, բացի հայրապետական կոնդակները և մէկ էլ երդումը, որ կրօնական արարողութիւն է համարւում։

Հնդկաստանի օրէնսդիր ժողովը վերակազմելու համար, տեղական վաճառականութեան կողմից պատգամաւոր է ընտրուած յայտնի վաճառական պ. Արգարեանցը։ Դա յայտնի տոհմի ներկայացուցիչ է, որ ամբողջ դարի ընթացքում տուել է Հնդկաստանին մի քանի աչքի ընկնող գործիչներ դատական և առևտրական ասպարէզներում։

Կառավարութիւնը հաստատել է Կովկասի հայոց Հրատարակչական ընկերութեան կանոնադրութիւնը։ Կանոնադրութիւնը կազմուել է և առաջարկուել պ. Ս. Լիսիցեանի նախաձեռնութեամբ և, ինչպէս հաղորդում է «Հորիզոն» լրագիրը, պ. Լիսիցեանը որոշել է «Լիսիցեան և ընկ» մասնաւոր հրատարակչական խմբի հրատարակութիւնները, մեր գիտենալով մօտ 60թ հազար ռուբլի արժողութեամբ, նուիրել նորակազմ ընկերութեան։ Այդ մասին կզեկուցուի առաջիկայ ընդհանուր ժողովին։

Նիւ-Եօրկից հաղորդում են «Բագու» լրագրին. «յայտնի հայ հարուստ վաճառական Թավշանճեանի սպանող պ. Համբարձումեանը դեկտեմբերի 6-ին մահուան պատժի ենթարկուեց Սինգ-Սինգի բանտում էլէքտրական բաղկաթոռի միջոցով։ Թաւշանճեանը սպանուեց նրա համար, որ հրաժարուեց իրանից պահանջած դրամը վճարել ինչ որ «կուսակցական» պէտքերի համար։ Սպանութիւնը իր ժամանակ յուզեց հայ ժողովրդի բոլոր խաւե-

ին, իսկ Նիւ-Եորկում առաջ բերեց հակա-հայկական հոսանք, որ բարեբաղդաբար, շուտով հանդարտուեց։ Այս հանգամանքով է բացատրւում ամերիկեան դատարանի խիստ դատավճիռը»։

Նիւ Եորկի «Globe»ը հաղորդում է, որ կին բժիշկ Ռաբինովիչը էլէքտրական մի գործիք է հնարել՝ մեռածներին կեանք վերադարձնող։ Այս օրերս նա բժիշկների ներկայութեամբ մի շարք փորձեր է կատարել ճագարի վրայ։ Ճագարին սպանեցին էլեկտրական հոսանքով ընդունուած եղանակով և ներկայ եղողները միաբերան նրան մեռած անուանեցին։ Ապա տ. Ռաբինովիչը գործածութեան դրաւ իր գործիքը և առաջ բերեց էլէքտրական չափական կոչուած շարժողութիւնը. հոսանքը ուղղելով հերթով սրտին և մէջքի ողնաշարի հիմքին։ Երեք րոպէից յետ ճագարի սիրտը սկսեց զարկել և շնչառութիւնը նորոգուեց։ Շուտով կենդանին բնական դրութիւն ընդունեց և կէս ժամից յետոյ արդէն թռչկոտում էր սենեակներում։ Այնուհետև տ. Ռաբինովիչը ցոյց հանեց, թէ ինչպէս կարելի է էլէքտրական եղանակով ճագարին մեռցնել առանց որևէ նրա համար ցաւակար հետևանքների։ Նա պնդում է, որ երկու փորձերն էլ կարելի է յաջողութեամբ գործադրել մարդկանց վրայ (Т. П.)։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

— Մեր յարգելի աշխատակիցներին և բաժանորդներին խմբագրութիւնս շնորհաւորում է նոր տարին։

— Մոսկուա. Մ. Շովրեան. ձեր յօդուածը ստացանք և կտպենք յունուարի համարից։

— Ալէքս. Պնչատ.—Ձեր յօդուածը մնաց հետևեալ համարին։

—Ղարաքլիսա. Ս. Ռօֆֆօր. Ձեր պատկերը մնաց հետևեալ համարում տպելու։

—Էջմիածին։ Ց. Պետրոսեան. բանաստեղծութիւնը ստացանք և կտպուի յունուարի համարում։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Գրիգոր Մագիստրոսի Թղթերը. բնագիրն յառաջաբանով և ծանօթութիւններով առաջին անգամ 'ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց. Ալէքս. 1910։

Մարգար. Գողգ. զինուորի յիշատակարանից, հրատ. Միածանի № 2. Թիֆլիս 1910։

Երևանի Հայոց Հոգևոր թեմական դպրանոցի տեղեկութիւնը. Երևան 1909.

Խմբագիր Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

ՀԱՅԿ. Ա. Ա. Ռ. Ա. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Библиотека